



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 07778199 Էլ. Փոստ [info\\_yeghegnadzor@aarhus.am](mailto:info_yeghegnadzor@aarhus.am)  
[hrachqocharyan@mail.ru](mailto:hrachqocharyan@mail.ru)

02/15

Բնապահպանական պետական տեսչության  
Վայոց ձորի տարածքային բաժին  
Բաժնի պետ Վահիկ Գրիգորյանին  
Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող  
Հրաչ Քոչարյանից

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոն Գրիգորյան

2015 թվականի հոկտեմբերի 19-ին համացանցում <<ԷկոԼուր>> -ը բնապահպանական կայքը տեղեկատվություն է տարածել, որ հոկտեմբերի 17-ին ՀՀ Վայոց ձոր մարզի Հերմոն համայնքի վարչական տարածքում, Եղեգիս գետի հարևանությամբ, ԷկոԼուրի ֆոտոխցիկը ֆիքսել է հարյուրավոր հատված ծառերի կոճղեր (<http://www.ecolur.org/hy/news/forest/mass-tree-felling-near-yeghegis-river-photos/7737/>):


Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանը խնդրում եմ Ձեզ, Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական, մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Արդյո՞ք օրինական, թե՞ անօրինական են կատարվել ծառերի հատումը, խախտման դեպքում վարչական տուգանք նշանակվել է, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ չափով
2. Ում է պատկանում ծառահատումների տարածքը
3. Ի՞նչ ծառեր են հատվել
4. Արդյո՞ք հատված ծառերի տարածքը գտնվում է Եղեգիս գետի պաշտպանիչ գոտում, թե ոչ:

Տեղեկատվությունը տրամադրելու մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն.

Հարգանքով Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

  
Հ. Քոչարյան  
20.10.2015թ.